

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY



FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department
of Romance and Germanic Philology, Yerevan State University,
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**
Doctor of Philology, professor of Moscow State University,
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**
Doctor of Philology, Institute of English Philology, Munich
University, Germany
- Charles Hall**
PhD, associate professor of Applied Linguistics, University of
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**
Dean of the Department of Romance and Germanic Philology,
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**
Head of Translation Chair,
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

Գլխավոր խմբագիր՝

Մարգարիտա Ապրեսյան

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական
խորհրդի**

Դորա Մաքսյան

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

պատվավոր անդամներ՝

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

Սվետլանա Տեր-Մինասովա

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

Հանս Մաուեր

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի
համալսարան

Չարլզ Հոուլ

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Խմբագրակազմ՝

Մամվել Աբրահամյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Յուրա Գաբրիելյան

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Կարո Կարապետյան

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Ալբերտ Սակարյան

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

Ելենա Միխայրյան

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Համիկ Բաղդասարյան

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Avagyan N., Bagiryan D., Melkonyan R. THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES	8
Avetikian M. TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT	18
Абрамян С. ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА	30
Амирян Н. ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ	41
Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д. ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ)	50
Тер-Саргсян Л. ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА	67
ԱԹՈՅԱՆ Լ. ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ	78

Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 89

Գրիգորյան Շ.
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 101

Մարտիրոսյան Մ.
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 111

Մինասյան Է.
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ
ՄԱՄՈՒԼՈՒՄ 120

Սարգսյան Լ.
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ 134

Ոսկանյան Ա.
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 149

Սարգսյան Լ.
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ 162

ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ

ABSTRACT

WAYS AND MEANS OF INCREASING TEST EFFECTIVENESS AT A MODERN STAGE IN ARMENIA

The article examines the ways and strategies of increasing test effectiveness aimed at improving the structural characteristics of the tests. It presents the results of the research carried out among teachers and pupils. The results of the research prove our presumption about the fact that pupils master the foreign language only on the test level performing, whereas their communicative competence hasn't been formed properly. Only the pupils who get high scores both on the written tests and oral exams on the English language perform all of the language skills: receptive, productive, interactive, mediative.

Key words: *test, research, language skills, communicative competence, examination.*

РЕЗЮМЕ

ПУТИ И СТРАТЕГИИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ТЕСТИРОВАНИЯ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ В АРМЕНИИ

В данной статье рассматриваются пути и стратегии повышения эффективности тестирования, направленные на улучшение отдельных характеристик теста. Представлены результаты опроса, проведенного среди преподавателей и студентов.

Результаты исследования полностью подтверждают наше предположение о том, что абитуриенты владеют языком, в основном, на уровне тестовых заданий, в то время как устная коммуникативная компетенция среди них не сформирована в должной мере. Высокие баллы по устному и письменному экзаменам по английскому языку получают те абитуриенты,

которые при подготовке к ним используют все виды речевой деятельности: рецептивный, продуктивный, интерактивный, медиативный.

Ключевые слова - тест, анализ, языковые навыки, коммуникативная компетенция, экзамен.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության են առնվում թեստի արդյունավետության բարձրացման ուղիները և ռազմավարությունները, միտված թեստի առանձին բնութագրերը բարելավելուն: Ներկայացվում են ուսուցիչների, աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքները:

Հարցման արդյունքները լիովին հաստատում են մեր կանխավարկածը, առ այն, որ դիմորդները լեզվին տիրապետում են հիմնականում գրավոր թեստային առաջադրանքների լուծման մակարդակում, իսկ բանավոր հաղորդակցման կոմպետենցիան նրանց մեջ ակնհայտորեն վատ է ձևավորված: Մինչդեռ օտար լեզվին տիրապետման անմիջական նպատակը հենց բանավոր հաղորդակցման հմտությունների ձևավորումն է: Անգլերենի բանավոր և գրավոր քննություններից հավասարաչափ բարձր միավորներ են ստանում այն դիմորդները, որոնք պատրաստվելիս զարգացնում են իրենց լեզվական հմտությունները, այդ թվում՝ օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ, մեդիատիվ:

Բանալի բառեր՝ թեստ, վերլուծություն, լեզվական հմտություն, հաղորդակցական կոմպետենցիա, քննություն:

Սույն հոդվածում քննության են առնվում թեստի արդյունավետության բարձրացման ուղիները և ռազմավարությունները, միտված թեստի առանձին բնութագրերը բարելավելուն: Ըստ այդմ, վերլուծվում է թեստի ընդհանուր կառույցի (construct) և տարբեր բնութագրերի հարաբերակցությունը, որը պահպանելիս ամեն մի թեստ դիտարկվում է նրա կիրառման ենթատեքստային և իրադրային տեսանկյուններից:

Ներկայացվում են ուսուցիչների, աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքները, որոնց նպատակն է պարզել սովորողների թեստաբանական մշակույթի ձևավորման ուսումնական և

արտաուսումնական գործոնները և ներկայացել սովորողների ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ, մեդիատիվ կարողությունները և հմտությունները զարգացնող թեստերի, թեստային առաջարանքների կիրառման մանկավարժական պայմանները:

Քննության առնելով թեստի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը՝ թեստաբանները (Цатырова, 1969: 85-92; Коккота, 1989: 54-64; Балуян, 2003: 123 և այլք) կիրառում են տարբեր եզրույթներ՝ «թեստի որակ», «թեստի չափանիշ» և այլն: Թեստաբանության զարգացմանը, ծավալների ընդլայնմանը և թեստաբանության վերաբերյալ գրականության ստեղծման աճող միտումներին զուգընթաց ի հայտ են գալիս և հստակեցվում են թեստաբանական շատ այլ եզրույթներ ևս, ինչպես՝ «գործնականություն», «տնտեսում», «օբյեկտիվություն», «հավաստիություն», «հուսալիություն» և այլն:

Ինչպես նշում է Ս. Բալույանը, «կառույցի հավաստիությունը որոշելը անհրաժեշտ է սկսել *կառույցի* սահմանումով: Օտար լեզուների դասավանդման հաղորդակցական մեթոդիկայում *կառույց* են համարվում ոչ թե խոսքային գործունեության տեսակներին և լեզվանյութին տիրապետման հմտությունները, այլ հաղորդակցական կոմպետենցիայի բաղադրիչները և ենթաբաղադրիչները» (Балуян, 2003: 52):

Կառույցի հավաստիության հետ անմիջականորեն առնչվում է թեստերում բնագրերի օգտագործման հանգամանքը, որի շուրջ վերջին տարիների շտեմարանների հետ կապված եղել են տարբեր քննարկումներ: Քննարկման առարկա է դարձել հատկապես համապատասխան առաջադրանքներ կազմելու համար տեքստերի ընտրության հարցը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ընտրել փորձառություն անցած տեքստեր տարբեր աղբյուրներից՝ աշխարհում շրջանառվող թեստերից, անգլալեզու թեստային ժողովածուներից, գեղարվեստական գրականությունից, ՋԼՄ-ներից: Այս տեսակետի պաշտպանները որպես հիմնավորում նշում են հայ թեստաբանների լեզվակիր չլինելը, ինչը կարող է հանգեցնել ձևակերպումներում, քերականության մեջ և լեզվի այլ գործառնություններում զանազան թերությունների: Ըստ մեկ այլ տեսակետի՝ անգլա-

խոս հասարակության համար ընտրված տեքստերի բովանդակությունը կարող է չհամապատասխանել մեր հասարակության մտածելակերպին, իսկ քերականությունը և մանավանդ բառապաշարը կարող են բարդ լինել մեր շրջանավարտների և դիմորդների համար: Ուստի պետք է մշակել սեփական տեքստեր՝ մեր աշակերտների լեզվամտածողությանը համապատասխան: Այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում գործածվող բնագրերով կազմված առաջադրանքները հիմնականում իրենց արդարացնում են, մանավանդ որ ՀՀ-ում գործածվող թեստերի համար դրանք ենթարկվում են համապատասխան մշակման և ադապտացիայի, փոփոխություններ են կատարվում բառապաշարում, նախադասությունները զտվում են խոսակցական տարրերից, քերականությունը համապատասխանեցվում է գրական անգլերենի քերականությանը՝ ըստ հանրակրթության ոլորտում գործածվող դասագրքային նյութի պահանջների:

2013-2014 թվականների անգլերեն գրավոր և բանավոր քննությունների արդյունքների հիման վրա իրականացվել է ուսումնասիրություն: Դիտարկվել են այն շրջանավարտների արդյունքները, ովքեր ընդունվել են լեզվաբանական բուհեր, այսինքն՝ հանձնել են թե՛ գրավոր, թե՛ բանավոր քննություններ անգլերենից: Համապատասխան հարցումների հիման վրա նրանք բաժանվել են երեք խմբի՝

1. շրջանավարտներ, որոնք անգլերենն ուսումնասիրել են դպրոցական դասագրքերով և նույն ուստարում լույս տեսած շտեմարաններով,

2. շրջանավարտներ, որոնք պատրաստվել են քննություններին և՛ մինչև 2003 թիվը լույս տեսած շտեմարաններով, և՛ 2013 կամ 2014 թվին լույս տեսած շտեմարաններով,

3. շրջանավարտներ, որոնք պատրաստվել են քննություններին մինչև 2013 կամ 2014 թվին լույս տեսած շտեմարաններով, ինչպես նաև լրացուցիչ TOFEL-ի և IELTS-ի թեստերի առանձին բաժիններով:

Բացի այս, շրջանավարտներից պահանջվել է նշել նաև այլ ձեռնարկներ, եթե այդպիսիք օգտագործվել են իրենց նախապատրաստա-

կան շրջանում: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ համարյա բոլոր շրջանավարտները պատրաստվելիս չեն բավարարվել միայն դասագրքերով և վերը նշված շտեմարաններով և օգտագործել են լրացուցիչ գրականություն, մասնավորապես՝ Հ. Թոքմաջյանի անգլերենի քերականության դասագիրքը, Ռ. Մրֆիի երկհատորյակը: Քիչ թվով շրջանավարտներ նշել են նաև Մ. Սվոնի գործնական անգլերենի դասագիրքը (Murphy “English Grammar In Use”, M.Swan “Practical English Usage”):

Հարցում է անցկացվել նաև այն ուսուցիչների և դասախոսների շրջանում, որոնք անմիջական առնչություն ունեն անգլերենի ընդունելության քննություններին. պատրաստում են շրջանավարտներին, ակտիվ մասնակցություն ունեն դասագրքերի ստեղծմանը, թեստերի կազմմանը, լուրջ հաջողություններ են գրանցել անգլերենի դասավանդման գործընթացում: Հարցմանը մասնակցել է անգլերենի 91 մասնագետ: Հարցումը հետապնդել է մասամբ նույն նպատակը, ինչ լեզվաբանական բուհեր ընդունվողների շրջանում անցկացված ուսումնասիրությունը, այն է՝ պարզել, թե՝

- ինչ ուսումնամեթոդական գրականությամբ են ուսուցիչները, կրկնուսույցները պատրաստում շրջանավարտներին ընդունելության քննություններին,
- որ դասագրքերը, ձեռնարկները, շտեմարաններն են նրանք ավելի արդյունավետ համարում շրջանավարտների պատրաստման գործում,

Մասամբ էլ անդրադարձել է քննություններին նախապատրաստման այլ հիմնախնդիրների, ինչպես՝

- ինչ տևողությամբ դասընթացներն են ավելի օպտիմալ շրջանավարտների պատրաստման համար,
- բացի վերոնշյալներից, ինչ այլ գործոններ են կարևոր շրջանավարտների պատրաստման գործում:

Հարցման ենթարկվածներին ներկայացվել են գրականության ցանկեր, որոնցում նրանք պետք է ընդգծեին այն դասագրքերը, ձեռնարկ-

ները, շտեմարանները, որոնք իրենք առաջարկում են շրջանավարտներին:

Նրանց առաջարկվել են հետևյալ հարցերը՝

1. Ո՞ր դասագրքերն եք նախընտրում շրջանավարտների հետ աշխատելիս:

Մեկնաբանեք Ձեր ընտրությունը:

2. Ո՞ր շտեմարաններն եք նախընտրում շրջանավարտների հետ աշխատելիս:

Մեկնաբանեք Ձեր ընտրությունը:

3. Արտերկրում հրատարակված ո՞ր թեստային ժողովածուներն եք նախընտրում շրջանավարտների հետ աշխատելիս:

Մեկնաբանեք Ձեր ընտրությունը:

Հարցման ենթարկված անգլերենի ուսուցիչների, դասախոսների 33%-ը նախապատվությունը տվել է անգլալեզու դասագրքերին՝ Ռ. Մրֆի, Ա. Թոմսն, 54% -ը համադրում է ՌԴ-ում, ՀՀ-ում և արտերկրում լույս տեսած դասագրքերը, իսկ 17%-ը բավարարվում է միայն ՀՀ-ում լույս տեսած դասագրքերով: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ում դասագրքաստեղծման, թեստերի կազմման գործը չի բավարարում ժամանակակից պահանջներին:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա դասախոսների 61%-ը նախընտրում է տվյալ ուսումնական տարում ՀՀ-ում լույս տեսած շտեմարանները, 13%-ը օգտվում է թե՛ ՌԴ-ում, թե՛ ՀՀ-ում և թե՛ արտերկրում լույս տեսած թեստերի ժողովածուներից, և 26%-ը օգտվում է նաև մինչև 2003 թիվը լույս տեսած շտեմարաններից: Այստեղից հետևում է, որ ուսուցիչների մեծ մասը խնդիր է դնում սերտել, մտապահել տալու միջոցով ծանոթացնել շրջանավարտներին միայն քննությունների ժամանակ կիրառվող թեստերին: Մինչև 2003 թիվը լույս տեսած շտեմարաններից օգտվողները հիմնականում դժգոհ են նոր շտեմարաններից, հատկապես այն պատճառով, որ նրանցում չկան թարգմանական թեստային առաջադրանքներ:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ անգլերենի ուսուցիչների և դասախոսների մի ստվար զանգված կիրառում են շրջանավարտներին պատրաստելիս TOEFL, IELTS և այլ թեստերի ժողովածուներ:

Քննություններին նախապատրաստվելու միջոցների և եղանակների վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով հարցեր են ուղղվել նաև դիմորդներին:

Նշվածներից որո՞նք եք կատարել քննություններին նախապատրաստվելու շրջանում:

1. Ունկնդրե՞լ եք օտարալեզու լսաերիզներ:

• Ունկնդրել եմ, քանի որ դա օգնում է քննությանը նախապատրաստվելուն:

• Ունկնդրել եմ իմ հայեցողությամբ՝ ոչ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

• Հիմնականում չեմ ունկնդրել:

2. Դիտե՞լ եք օտարալեզու տեսաերիզներ:

• Դիտել եմ, քանի որ դա օգնում է քննությանը նախապատրաստվելուն:

• Դիտել եմ իմ հայեցողությամբ՝ ոչ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

• Հիմնականում չեմ դիտել:

3. Ընթերցե՞լ եք օտարալեզու բնագրեր:

• Ընթերցել եմ, քանի որ դա օգնում է քննությանը նախապատրաստվելուն:

• Ընթերցել եմ իմ հայեցողությամբ՝ ոչ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

• Հիմնականում չեմ ընթերցել:

4. Թարգմանե՞լ եք օտարալեզու գրականություն հայերենից անգլերեն և հակառակը:

• Թարգմանել եմ, քանի որ դա օգնում է քննությանը նախապատրաստվելուն:

- Թարգմանել եմ իմ հայեցողությամբ՝ ոչ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

- Հիմնականում չեմ թարգմանել:

5. Ձեր ուսուցիչները պարբերաբար գրուցե՞լ են Ձեզ հետ օտար լեզվով:

- Հաճախ են գրուցել:

- Երբեմն են գրուցել:

- Հիմնականում չեն գրուցել:

6. Ձեր ուսուցիչները կիրառե՞լ են դերային խաղեր Ձեզ բանավոր քննություններին պատրաստելիս:

- Հաճախ են կիրառել:

- Երբեմն են կիրառել:

- Հիմնականում չեն կիրառել:

Աշակերտների շրջանում անցկացված հարցումներից պարզվել է, որ քննություններին նախապատրաստվելիս օտարալեզու լսաերիզներ ունկնդրում է աշակերտների 48%-ը, 33%-ը ունկնդրում է իր հայեցողությամբ՝ ոչ քննություն հանձնելու նպատակով, 19%-ը հիմնականում չի ունկնդրում:

Օտարալեզու տեսաերիզներ դիտում են փոքր-ինչ ավելի շատ դիմորդներ, քան օտարալեզու լսաերիզներ ունկնդրողները՝ 36%, ոչ քննություն հանձնելու համար դիտում են 23%-ը: 41%-ը չի դտում:

Օտարալեզու բնագրեր ընթերցողների քանակը որոշ չափով գերազանցում է օտարալեզու լսաերիզներ ունկնդրողների և օտարալեզու տեսաերիզներ դիտողների քանակը՝ 53%, իրենց հայեցողությամբ, քննություն հանձնելու նպատակ չունենալով՝ ընթերցում են 18%-ը, 29%-ը չի ընթերցում:

Օտարալեզու բնագրեր ընթերցողների տոկոսը քիչ թե շատ հուսադրող է: Այլ հարց է, թե մեթոդական կոմպետենցիայի ինչ մակարդակում են նրանց ուսուցիչները կազմակերպել և սովորեցրել օտարալեզու բնագրերի ընթերցանությունը: Դժվար է պարզել նաև, թե ինչ վերձանաչողական և հուզագայական ռազմավարություններ են նրանք կիրա-

ռել, որպեսզի բնագրերի ընթերցումը հիմք դառնա ընթերցանության համապատասխան թեստային առաջադրանքների հաջող կատարման համար:

Ըստ հարցման ենթարկված դիմորդների 63%-ի պատասխանների՝ իրենք քննություններին նախապատրաստվելիս թարգմանել են օտարալեզու զանազան բնագրեր, 10%-ը թարգմանել է մինչև 2003 թիվը լույս տեսած շտեմարաններում տեղ գտած տեքստերը, ուսուցիչների պահանջով անգլերեն տեքստեր չի թարգմանել հարցման մասնակիցների միայն 27%-ը: Ինչպես և ընթերցանությունը, թարգմանությունը նույնպես ուսուցիչների շոշափելի մասի կողմից ընդունված խոսքային գործունեություն է, ավելին, շատերը չեն կարող պատկերացնել օտար լեզուների ուսուցումը առանց թարգմանության: Այլ հարց է, թե նրանք ինչպես են մոտենում այդ հարցին՝ քննությունների հանձման, թե շրջանավարտների մեղիատիվ կարողությունների զարգացման տեսանկյունից:

Հարցման ենթարկված աշակերտների 53%-ը պատասխանել է, որ իրենց ուսուցիչները, դասախոսները պարբերաբար իրենց հետ օտար լեզվով զրուցել են բանավոր քննությունների համար նախատեսված թեմաների շուրջ: Տարբեր տիպի աշխատանքների ընթացքում իրենց դիմորդների հետ անգլերեն է խոսել ուսուցիչների կամ դասախոսների 18%-ը, միայն 29%-ը զրուցել է տարբեր, նաև այլ թեմաներով: Ակնհայտ է, որ միայն տրված թեմաների շուրջ զրույցները չեն կարող բազմակողմանիորեն զարգացնել շրջանավարտների խոսքային կարողությունները:

Ինչ վերաբերում է ուսուցողական նպատակներով դերային խաղերին, ապա, ըստ դիմորդների պատասխանների, սա ամենաքիչ կիրառվող միջոցն է եղել օտար լեզուների դասավանդման ընթացքում: Այս հարցին դրական պատասխան է տվել աշակերտների միայն 23%-ը, 43%-ը մասնակցել է դերային խաղերի՝ ոչ թեստային առաջադրանքների կատարման շրջանակներում կամ բանավոր քննություններին

պատրաստելիս: 34%-ը նշում է, որ իրենց երբևէ դերային խաղերի մասնակից չեն դարձրել:

Ակնհայտ է, որ միայն ՀՀ-ում կամ միայն արտերկրում ստեղծված դասագրքերով և թեստային ժողովածուներով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: 2014 թ., բանավոր քննություն հանձնած գերազանց գնահատական ստացած 42 շրջանավարտների շուրջ 60%-ը իր պատրաստման շրջանում ունկնդրել է անգլերեն բնագրային չափապատասխան տեքստեր, շուրջ 80%-ը պարբերաբար ընթերցել և թարգմանել է անգլերեն բնագրեր: Գրեթե բոլորը բանավոր խոսքը զարգացրել են մենախոսություններով և երկխոսություններով:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ բանավոր քննությունից բարձր գնահատական ստացած դիմորդների 80%-ը նույնպիսի գնահատական է ստացել նաև գրավոր քննությունից: Սակայն նույն պատկերը չէ հակառակի դեպքում: Գրավոր քննությունից 18 և բարձր գնահատական ստացած որոշ դիմորդներ բանավոր քննության ժամանակ ստանում են 5-6 միավորով ավելի ցածր գնահատականներ: Սա նշանակում է, որ նրանք լեզվին տիրապետում են հիմնականում գրավոր թեստային առաջադրանքների լուծման մակարդակում, իսկ բանավոր հաղորդակցման կոմպետենցիան նրանց մեջ ակնհայտորեն վատ է ձևավորված: Մինչդեռ օտար լեզվին տիրապետման անմիջական նպատակադրումը հենց բանավոր հաղորդակցման հմտության ձեռքբերումն է, ինչը նշանակում է լսել և հասկանալ օտարալեզու խոսքը, կարողանալ այդ լեզվով արտահայտել սեփական մտքերը: Ուստի ներկայումս լուրջ անելիքներ կան հատկապես այդ ուղղությամբ:

Եզրակացություն

Հարցման արդյունքները լիովին հաստատում են մեր կանխավարկածը, առ այն, որ անգլերենի բանավոր և գրավոր քննություններից հավասարաչափ բարձր միավորներ են ստանում այն դիմորդները, որոնք պատրաստվելիս զարգացնում են իրենց լեզվական հմտությունները,

այդ թվում՝ օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ, մեդիատիվ՝ անկախ քննությունների համար նախատեսված նյութերից: Մինչդեռ այն դիմորդները, որոնք պատրաստվում են միայն այդ նյութի շրջանակներում, քննություններից մեկը կամ մյուսը ձախողում են (ընդ որում, ինչպես գրավոր քննությունից բարձր գնահատական ստացածը կարող է ցածր ստանալ բանավորից, այնպես էլ՝ հակառակը)՝ կախված նրանից, թե ինչին են առավել ուշադրություն դարձրած լինում նախապատրաստական շրջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Цатурова И. А.** (1969), Из истории развития тестов в СССР и за рубежом. Таганрог.:– С. 85-92.
2. **Коккота В.А.** (1989), Лингводидактическое тестирование. – М.: Высшая школа, – С. 54- 64.
3. **Балуян, С. Р.** (2003), Контрольно-оценочные материалы для измерения качества обучения английскому языку на базовом курсе (1999-2002) [Текст] / С. Р. Балуян. – Таганрог: Изд-во ТРТУ, – 123 с.
4. **Балуян, С. Р.** (2003), Материалы вступительного экзамена по специальности «перевод и переводоведение». Устная коммуникация (1998-2002) [Текст] / С. Р. Балуян. – Таганрог: Изд-во ТРТУ, – 121 с.
5. **Балуян, С. Р.** (2003), Test Your Reading Skills [Текст] / С. Р. Балуян. – Таганрог: Изд-во ТРТУ, - 43 с.
6. **Балуян, С. Р.** (2003), Cloze Tests. Пособие для самостоятельной работы абитуриентов по подготовке к вступительному тестированию по английскому языку [Текст] / С. Р. Балуян, А.А. Яковлев. – Таганрог: Изд-во ТРТУ, - 52 с. (Соавт. в равных долях)